

Անցնիր հարեալ անդ յապուշ ընդ այնքանի շահատակումն,
 Պատկառ կայր յախոյենէն՝ ընդ արութիւնն ըսքանչացեալ:
 Հուսկ Տ՝ Այլի ծանրեալն ամօք՝ չարախտաւար հարուածով,
 Ըզմեծանձնեայ նահատակն առնէ առ ոոսս իւր դիտապատ:
 Մէզ մըռայլ յաւիտենից պատէ զաչացըն լուսարանս,
 Սաղաւարտն առ նովաւ հողաթաւալ յերկիր զլորի:
 Տ՝ Այլի զդէմըն նըշմարէ, սվ աղաղակ անյուսութեան:
 Տեօանէ փարի զնովաւ և էր, աւանդ, որդի նորա:
 Հայրն եղկելի ետ ընդ ետ զաչսրն թացեալ յարտօսր 'ի սուգ,
 Մինչ ըզզէնս որդեկոտոր դարձուցանէր 'ի լանջոս իւր,
 Արգելուն զինքն՝ ընդդէմ կացեալ արդարաւառ մոլեգնութեանն:
 Ահափետեալ թափէ գանձն 'ի սոսկալի վայրէ անտի:
 Նըզովէ մինչ 'ի սպառ զեզեռնաւորն իւր յաղթութիւն,
 Բարեաւ մընալ արքունեացն ասէ, մարդկան, փառաց բարձու,
 Եւ յիւրմէ իսկ անձնէն խոյս յանապատըս տըւեալ,
 Ի հուսկ սահման տիեզերաց գընայ ծածկել զաղէտ սըրտին:
 Անդ, թէպէտ դայցէ արեւն աւետաբեր լուսոյ երկրի,
 Թէպէտ 'ի յանդ զընթացս հանցէ լայնածաւալ 'ի ծոց ալեաց,
 Ի ձայն նորա հընչէին յողորմ վանգիւն գանգք արձանաց,
 Զանուն, ըզհէքն անուն թըշուառական իւրոյ որդւոյն

ՎՈՂԴԻՒ

ԹՐԳՄՆ. ՓԱՌՆԱՅ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ուսումնաարտ Սշակ. Մ - Ռափ. Վարժարանի

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ

ՍԱՂՄՈՍԱՏ

—(ՏԵՍ ՀԱՅՈՐ ԻՋ. ԷՋ 348)—

Գ

Տէր, այս ինչպէս բաղմաթիւ
 Եղան նեղիչք իմ անձին,
 Եւ այլ շատեր ի կըռիւ:
 Եւան ինձ գէմ, խորխտացին:

Շատեր ասին թէ՝ «Սորա
 «Գործը վատ է. Աստուծով
 «Փրկութեան յոյս մի չի կայ,
 «Ինկած է սա երեսէ յ:

Այլ գու, Տէր իմ ողորմած,
 Եղար խեղճիս օգնական,

Տուր որ՝ գլուխըս ծըռած
 Նորէն առ Քեզ ամբառնամ:
 Ես բարձրաձայն գոչեցի,
 Բարձրեալն Աստուած երկընքէն
 Լըսեց ձայնիս զըթալի,
 Շուտ հասուց ինձ ապաւէն:
 Երբ նընջեցի, քուն եղայ,
 Սիրտըս հանգիստ անխըռով:
 Առաւօտու երբ զարթեայ
 Քաջայերուած Աստուծմով:
 Թըշնամոյս զօրք բերաւոր
 Ձորս դիտ առին՝ պատեցին:
 Դու ես իմ Տէր զօրաւոր,
 Ձի վախցայ ես քընաւին:
 Մեղաւորաց մի բրնաւ,
 Տէր, զըթալով խընայեր:
 Իմ Թըշնամեացս անիրաւ
 Զարդէ կոտրէ ակռայներ:
 Ազգ, ժողովուրդ, Տէր, քեզմով
 Կը փըրկուին ու կ'ապին:
 Քեզ օրհնութիւն երգելով
 Երբէք պիտի չի դադրին:

Դ

Երբոր առ Քեզ աղօթեմ,
 Արդարութեամբ ինձ լըսէ:
 Անդորր հանէ նեղ օրէն,
 Գըթա վըրայ, ողորմէ:
 Աղամորդիք, ինչու միշտ
 Կը սիրէք դուք նանրութիւն,
 Մինչև երբ էք խըստասիրտ,
 Փընտռելով փուճ սըտութիւն:
 Գիտցիք՝ Աստուած իւր սուրբին
 Ուրիշ աչքով կը նայի,
 Երբ աղօթեմ սըրտագին,
 Նա կը լըսէ իմ ձայնի:
 Թէ սըրդողիք զայրացած,
 Մեղք խօսք բերնէ չը հանէք:
 Թէ սրխալիք յեղակարծ,
 Անկողնոց մէջ զըղջացէք:
 Պատարագ սուրբ և արդար
 Խոնարհ հոգւով ինքնանուէր
 Մատուցէք Տեառն կամակար,
 Եւ յուսացէք դուք ի Տէր:
 Շատին բերանը այս է:
 « Ո՛վ մեզ կու տայ լաւ օրեր »:

Դարձիր Տէր իմ, մէկ մ'նայէ,
Յոյց մեզ Գո լոյս երեսներս
Ներսէս՝ սրբտանց հըխացի,
Երբոր առատ տըւիր Դու
Ցորեան, պրտուդ, ձէթ, գինի
Ժողովըդ հանդ ուտելու.
Հանգիստ սըրտով կը պառկիմ,
Եւ կը նընջեմ խաղաղ քուն.
Քանզի յուսով տոանձին
Կու տաս վարել ինձ կեանք գուն.

Ե

Աղօթքներուս ականջ դիր,
Եւ ինչ որ կայ սըրտիս խոր,
Նայէ յերկնից մըտադիր
Ո՛վ Աստուած իմ թագաւոր:
Լոյսը մըթան՝ առտըւանց
Գեռ չի ծագած արեգակ,
Պատրաստ եմ, Տէր, քու դիմաց,
Լըսէ սըրտիս աղաչանք:
Սնորէն գործք դու կ'ատես.
Չարագործ վատ մարդիկներ
Չունին գիմացըդ երես
Երևնալու անտարբեր:
Նոյն սըտախօս ամբարիշտ
Որ անիրաւ կը վարուի,
Դու կը պատժես խըստիւ միշտ,
Որ աշխարհէս կորսուի.
Արինաչեղ նենգաւոր
Կ'առնու արժան պատուհաս.
Պիղծ են առջևըդ բոլոր
Որ գործեն չար և վընաս:
Ողորմութեանդ շընորհիւ
Ես տաճարիդ մէջ կանգնած
Իրկիր պագեմ երկիւղիւ
Քո սըրբութեանցըդ դիմաց,
Արդարութեան սուրբ ճամբէդ
Ձի մոլորիմ ես յանկարծ.
Արա ուղիդ արահետ.
Խընդաց չըլլամ թըշնամեաց,
Բերներուն մէջը չը կայ
Ամենեին խօսք շիտակ,
Լի է սիրտերը նոցա
Նենգ չարութիւն և դաւանք,
Իբր գերեզման միշտ բաց են
Նոցա հոտեալ գարշ կոկորդ.

Լեզուով խօսին զըրուցեն
Խօսք նենգաւոր շողորորթ:

Դատէ զնոսա, Տէր Աստուած,
Չար խորհուղներն արգիլէ.
Դառնացուցին սիրտդ զըթած,
Թող կորսուին աշխարհքէ:

Նոքա ուրախ միշտ լինին
Որք՝ Աստուծոյ կը յուսան.
Տէր է իրենց պաշտպանին,
Պիտի ցընձան յաւիտեան.

Որք կը սիրեն, Տէր, ըզքեզ,
Եւ անուևովդ կը պարծին.
Դու Հաճութեամբ կու սըփռես
Որհնենքդ՝ վահանդ վըրանին:

Շարունակիկ

Հ. ԳԵՐՈՎՅԷ Վ. ԳՈՒՇՆԵՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ-ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԿՏԱԿԻՆ ՅՈՎԱԾՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՅ

Սահակ-Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութիւնն՝ որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կողմէ հաստատուած է, պիտի կատարուի յառաջիկայ 1890 տարւոյ, Յունիս 21ին, Սրբոց Թարգմանչաց տօնի օրն, յԱզգային Պատրիարքարանի: Հետեւապէս Գործադիր-Մնայուն Յանձնաժողովս կը փութայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն, որ ունին ազգային Լեզուաքննութեան եւ Պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ, ձեռագիր կամ տպագիր, եւ կը փափաքին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, ի ունեան յուղարկել զայնս առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պօլիս, մինչեւ յառաջիկայ 18 Մարտ 1890 տարւոյ:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին, եւ ձեռագիր մէկ օրինակ, որք ետ չեն տրուիր:

Համար 81

14/26 Նոյեմբեր 1889

Ի ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՀԱՅՈՅ

Կ. ՊՈԼԻՍ